ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 22.05.2025 թ. կայացած նիստի թիվ 13 արձանագրություն

Օրակարգ

1. Ֆակուլտետի Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
2. 2024-2025 ուսումնական տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվություն (արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա.Սեդրակյան, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Շ.Պարոնյան):
3. Առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորում:
4. 2024-2025 ուսումնական տարում ֆակուլտետի մեթոդխորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ նախագահի հաշվետվություն:
5. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թիվ 13 նիստին 36 անդամներից ներկա էին 25-ը: Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ ֆակուլտետի Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքների հաշվետվությանը:

ԼՍԵՑԻՆ՝ 2024-2025 ուսումնական տարում Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դիանա Հովհանյանը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարում Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքների ամփոփ նկարագիրը: Նշվեց, որ ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը 2024-2025 ուստարվա ընթացքում շարունակել է ակտիվ և բովանդակային գործունեությունը՝ կարևորելով ուսանողների կրթական, մասնագիտական, մշակութային, ու սոցիալական ներուժի զարգացումը: Ուսանողական խորհրդի ծրագրերն ու նախաձեռնությունները ձևավորվել են ուսանողների իրական կարիքներին արձագանքման, հմտությունների զարգացման, արժեքների ձևավորման, ինչպես նաև համապարփակ ուսանողական համայնք ստեղծելու տեսլականով: Ուսումնական տարվա սկզբին իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ. ձևավորվել է

նոր կազմ, ընտրվել են հանձնաժողովների պատասխանատուներ և քարտուղար, վերահիմաստավորվել է ՈւԽ-ի գործունեության ռազմավարությունը: Առաջին կուրսեցիների՝ կրթական գործընթացում արդյունավետ ինտեգրման համար կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ՝ ներկայացնելու ՈւԽ-ի գործունեության հիմնական ուղղությունները և անդամագրվելու հնարավորությունները: Կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանն ուղղված դասընթացների շարք, թեմատիկ քննարկումներ ու սեմինարներ (հաղորդակցման հմտությունների զարգացում, copywriting և content creation, հաղորդակցման էթիկա): Մասնագիտական հմտությունների զարգացման շրջանակում ուսանողները մասնակցել են համապատասխան ոլորտների մասնագետների հետ հանդիպումների, այցելել են բուհեր, թանգարաններ, մշակութային հաստատություններ: Միջմշակութային հաղորդակցության զարգացման ու միջազգային կրթական հնարավորությունների վերաբերյալ իրազեկման շրջանակում անցկացվել են պանելային քննարկումներ, կազմակերպվել են հանդիպումներ Erasmus+, DAAD և այլ կրթական ծրագրերի շրջանավարտների և ոլորտը համակարգող մասնագետների հետ: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստեղծվել են հարթակներ՝ ուսանողների համար ինքնաարտահայտման, փոխհամագործակցության և ուսուցման համար՝ միաժամանակ վերածելով ֆակուլտետը ստեղծագործական, միջմշակութային և նախաձեռնող կենտրոնի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ Դ. Հովհանյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Դեկանն անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ 2024-2025 ուսումնական տարում արտասահմանյան գրականության և միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություններին:

ԼՍԵՑԻՆ՝ 2024-2025 ուստարում արտասահմանյան գրականության ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչ Ա.Սեդրակյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Սեդրակյանը նշեց, որ ամբիոնը հաշվետու ուսումնական տարում շարունակել է արդյունավետ կրթագիտական գործունեությունը՝ նկատելի առաջընթաց գրանցելով ինչպես ուսումնական, այնպես էլ գիտամեթոդական աշխատանքների ուղղությամբ:

2024-2025 ուսումնական տարում ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի տասը շրջանավարտի ավարտական աշխատանքների թեմաները արտասահմանյան գրականության շրջանակում էին: Հարկ է ընդգծել, որ ամփոփիչ ատեստավորման արդյունքները գոհացուցիչ են՝ նկատի առնելով ողջ ուսումնական տարում իրականացված հետևողական աշխատանքը: Թեմաներն առնչվում էին անգլո–ամերիկյան, գերմանական ու իտալական գրականության արդիական հիմնահարցերի:

Հաշվետու ուստարում ամբիոնի դասախոսական կազմի ջանքերով լույս է ընծայվել 2 մենագրություն, 35 գիտական հոդված (որոնցից 4-ը գտնվում է տպագրության փուլում)՝ տեղական և միջազգային (այդ թվում՝ 6 հոդված Scopus համակարգում) ամսագրերում, և գիտաժողովների մասնակցության 4 զեկուցում:

Ամբիոնը զգալի աշխատանք է իրականացնում կրթական եռաստիճան համակարգի երրորդ մակարդակի՝ դոկտորական կրթության ուղղությամբ: Ժ. 01.07 Ատասահմանյան գրականություն մասնագիտության գծով ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքն են շարունակել ասպիրանտներ և հայցորդներ, ինչը կարևոր է կրթության շարունակականության համատեքստում:

Հաշվետու ժամանակահատվածում վերոնշյալ մասնագիտության գծով 006 մասնագիտական խորհրդում պաշտպանվել է երկու թեկնածուական ատենախոսություն:

Միջազգային համագործակցության խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները ևս կազմել են ամբիոնի գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Մասնավո-րապես՝ ամբիոնը հյուրընկալել է երկու այցելու պրոֆեսորի, որոնց դասախոսությունների թեմատիկ շրջանակն ընդգրկել է գրականության միջգիտակարգային հետազոտությունների տիրույթը:

2024 թ. հոկտեմբերի 3-6-ը կազմակերպվել է Շեքսպիրյան 5-րդ միջազգային գիտաժողովը ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի և Հայաստանի ամերիկյան համալսարանի համատեղ նախաձեռնությամբ:
2024 թ. նոյեմբերին պրոֆեսոր Ա. Սեդրակյանի ջանքերով ԵՊՀ մշակույթի կենտրոնում կազմակերպվել է պոեզիայի մրցույթ միջոցառումը:
Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար հանդիպումներ է կազմակերպում ֆակուլտետի ՈՒԽ և ՈՒԳԸ կազմի ներկայացուցիչների և հետ: Այդ համատեքստում պրոֆ. Ա. Սեդրակյանը ընթացիկ տարվա մայիսին Ծաղկաձորի Համալսարան ուսումնաարտադրական բազայում Ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմակերպել էր գիտաժողով «Ինքնության արտացոլումը գրականության մեջ» խորագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ա.Սեդրակյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ 2024-2025 ուսումնական տարում միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչ Շ.Պարոնյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Շ. Պարոնյանը ներկայացրեց միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի կատարած աշխատանքների նկարագիրը: Ամբիոնի նպատակն է պատրաստել անգլերենին տիրապետող հաղորդակցության բարձրակարգ մասնագետներ, որոնք կտիրապետեն մշակութային իրազեկության հիմնարար սկզբունքներին և կկարողանան արդյունավետ հաղորդակցվել տարբեր լեզվամշակույթների ներկայացուցիչների հետ՝ կիրառելով լեզուների հարմարակման մեխանիզմը: Ամբիոնը տարիներ շարունակ մեծ հաջողությամբ իրականացնում է «Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)» կրթական ծրագիրը բակալավրիատում և «Միջազգային գործարար հաղորդակցության լեզվամշակույթ» կրթական ծրագիրը մագիստրատուրայում: Ամբիոնի գերակա խնդիրներից մեկը մշտապես եղել է ուսուցման որակի բարելավումը և ուսանողների գիտելիքների ու հմտությունների

համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Ուստի, տարիներ շարունակ ամբիոնի դասախոսների համար առաջնահերթ խնդիր է եղել օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդների, տարբեր առցանց հարթակների կիրառումը լսարանում և արտալսարանային աշխատանքներում: Հաշվետու ուսումնական տարում ամբիոնի կրթական ծրագրերում դասավանդել է հրավիրյալ լեզվակիր դասախոս:

Միջազգային շարժունության շրջանակում COIL առցանց ծրագրի համատեքստում իրականացվել են համագործակցային նախագծեր Բրազիլիայի Ֆատեք և Ֆրանսիայի Կլերմոն Օվերն համալսարանների հետ:

Ամբիոնը լեզվաբանական կրթության հետ համատեղ իրականացնում է մարքեթինգային հաղորդակցության հմտությունների ուսուցում: Այս առումով «Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսի կրթական ծրագիրը միջգիտակարգային է՝ հիմված տեսական գիտելիքի ու գործնական հմտությունների, կարողությունների ուսուցման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը կազմակերպել է սիմպոզիում՝ «Marketing Communication and Business Discourse: Perspectives and Challenges» խորագրով: Միջոցառումն իր շուրջն էր համախմբել հաղորդակցության ոլորտի լավագույն մասնագետների, փորձագետների, գիտնականների, դասախոսների, ամբիոնի՝ գործնական ոլորտում իրենց դիրքերն ամրապնդած շրջանավարտների, ինչպես նաև մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողների՝ նպատակ ունենալով մեկտեղելու տեսական գիտելիքը, փորձն ու նորարարական մոտեցումները: Ամբիոնը սերտ գործակցային կապեր է հաստատել MultiLingNet եվրոպական միջազգային ասոցիացիայի հետ, որտեղ ընդգրկված են միջմշակութային հաղորդակցության, բազմալեզվության և բազմամշակութայնության հարցերով զբաղվող համաշխարհային ճանաչում ունեցող լեզվաբաններ: MultiLingNet եվրոպական միջազգային ասոցիացիայի միջոցով ամբիոնը նաև սերտ կապեր է հաստատել Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի Կրթության և հասարակության ֆակուլտետի հետ: Ապրիլի 17-ին բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողները Եվրասիա միջազգային համալսարանի Լեզուների, հաղորդակցության և

մանկավարժության ամբիոնի հետ համատեղ մասնակցեցին «Աֆրո–ամերիկյան խոսակցական անգլերեն» թեմայով առցանց դասախոսությանը, որը վարում էր Գենտի համալսարանի դասախոս Ջոն Լեթհեմ-Սփրինքլը:

Անդրադառնալով ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքներին՝ Շ. Պարոնյանը նշեց, որ հաշվետու ուստարում ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 10 գիտական հոդված հայաստանյան ու արտասահմանյան պարբերականներում, որոնցից 1-ը՝ «Scopus» շտեմարանում, 1 ուսումնական ձեռնարկ հանձնված է տպագրության:

Դասախոսները մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել միջազգային և տեղական գիտաժողովներում (միջազգային գիտաժողովներում՝ 3 մասնակցություն, 3 զեկուցում, տեղական գիտաժողովներում՝ 4 մասնակցություն, 1 զեկուցում), տեղական սիմպոզիումի /17 մասնակցություն, 5 զեկուցում/, առցանց վեբինարների /4/ և դասընթացների /4/, ինչպես նաև ԵՊՀ Շարունակական կրթության կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին /3/:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Շ.Պարոնյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Նարե Անդրանիկի Շալունցի** ատենստավորման հարցը (մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ, ատենախոսության թեմա՝ «Մարդկային հատկանիշ արտահայտող առածների ու ասացվածքների ճանաչողական-գործաբանական հայեցակերպը ֆրանսերենում (հայերենի զուգադրությամբ)», գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Հասմիկ Գրիգորի Բաղդասարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նարե Շալունցը նշեց, որ հաշվետու ուսումնական տարում կատարված աշխատանքի կրթական բաղադրիչը ներառել է դասընթացների մասնակցություն, իսկ հետազոտական հատվածը՝ համապատասխան ակադեմիական գրականության մշակում, փաստական լեզվանյութի վերլուծություն: Նշվեց, որ մեկ գիտական հոդված տպագրվել է Օտար լեզուները բարձրագույն դպրոցում գիտական պարբերականում («Առածի

ու ասացվածքի սահմանման խնդիրը արդի լեզվաբանության հարացույցում» վերտառությամբ), իսկ մյուսը հանձնված է տպագրության Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն պարբերականում («Առածների ու ասացվածքների ուսումնասիրման լեզվամշակութային ու լեզվաճանաչողական-գործաբանական հայեցակերպերը» վերտառությամբ): Առածաբանությունը դիտարկվել է միջգիտակարգային հետազոտությունների լույսի ներքո, լեզու, մշակույթ, մտածողություն, ճանաչողություն ու խոսույթ հասկացությունների հատման տիրույթում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով ասպիրանտ Նարե Անդրանիկի Շալունցի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Ամալիկ Սևակի Բաղդասարյանի** ատեստավորման հարցը (մասնագիտություն՝ Ժ.01.07 Արտասահմանյան գրականություն, ատենախոսության թեմա՝ «Ստեղծագործական երկվությունը Ռոմեն Գարիի (Էմիլ Աժարի) ստեղծագործություններում», գիտական ղեկավար՝ բ.գ.թ., պրոֆեսոր Անուշ Ռոստոմի Սեդրակյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամալիկ Բաղդասարյանը նշեց, որ աշխատանքի առանցքը ֆրանսիացի գրող Ռոմեն Գարիի «երկակի» գրական ինքնության ուսումնասիրությունն է: Հետազոտությունն իրականացվում է ժամանակակից գրականագիտական, լեզվաբանական և մշակութաբանական տեսությունների համադրմամբ՝ ընդգրկելով ինքնության, գրական դիմակի կառուցման և հեղինակի պատրաստում չորս գիտական հոդված, մասնակցել է կրեդիտային դասընթացներին: 2024-2025 ուսումնական տարում կատարված աշխատանքն ընդգրկել է գիտական գրականության ուսումնասիրություն, տեսությունների համադրություն, ինչպես նաև գրական-գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով ասպիրանտ Ամալիկ Սևակի Բաղդասարյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Նաթելլա Լենժետի Հովակիմյանի** ատեստավորման հարցը (մասնագիտություն՝ Ժ.01.07 Արտասահմանյան գրականություն,

ատենախոսության թեմա՝ «Նոր միֆամտածողությունը Ջոն Ափդայքի արձակում», գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Արա Հրաչիկի Առաքելյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նաթելլա Հովակիմյանը նշեց, որ թեկնածուական ատենախոսությունը հիմնված է Ջոն Ափդայքի երեք ստեղծագործությունների՝ «Կենտավրոս», Կազմվել է հետազոտության աշխատանքային պլանը, ըստ որի՝ աշխատանքը բաղկացած է լինելու չորս գլուխներից, իրականացվել է գիտական գրականության ուսումնասիրություն: Ստեղծագործությունների վերլուծությունն իրականացվելու է տարբեր միֆոլոգիաների համադրման շրջանակում՝ նկատի առնելով վեպերում առկա տարաբնույթ հիմնահարցերը: Ասպիրանտը հավելեց, որ մասնակցել է կրեդիտային դասընթացներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով ասպիրանտ Նաթելլա Լենժետի Հովակիմյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Հասմիկ Սարգսի Չալոյանի** ատեստավորման հարցը (մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ, ատենախոսության թեմա՝ «Հակիրճ գործարար ներկայացումների միջմշակութային գործաբանական բնութագիրը», գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Շուշանիկ Հարությունի Պարոնյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հասմիկ Չալոյանը նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում ուսումնասիրել է միջմշակութային գործաբանության, գործարար հաղորդակցության և հակիրճ գործարար ներկայացումների տեսությանը վերաբերող մասնագիտական և գիտական գրականություն: Տեսական աշխատանքին զուգահեռ՝ իրականացվել է նաև փաստական լեզվանյութի հավաքագրում: Ասպիրանտը նշեց, որ մասնակցել է տեղական և միջազգային տարբեր միջոցառումների՝ ստարտափ մրցույթների, բիզնես համաժողովների, ներդրումային հանդիպումների, որտեղ ներկայացվել են հակիրճ գործարար ներկայացումներ: Այս միջոցառումների ընթացքում իրականացվել է բանավոր և գրավոր հակիրճ գործարար ներկայացումների դիտարկում և փաստագրում նրանց հաղորդակցական ձևերի առանձնահատկությունների վերաբերյալ, հավաքագրվել է բազմամշակութային կորպուս, որն

ընդգրկում է հակիրճ գործարար ներկայացումների նմուշներ: Տպագրության է պատրաստում երկու գիտական հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատելով ասպիրանտ Հասմիկ Սարգսի Չալոյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ 2024-2025 ուսումնական տարում ֆակուլտետի մեթոդխորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ նախագահի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մեթոդխորհրդի նախագահ Ն. Հարությունյանը նշեց, որ 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում մեթոդխորհրդի կողմից կազմակերպվել և անցկացվել է 7 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացի բարելավմանը, ուսուցման արդյունավետության բարձրացմանը և գնահատման մեխանիզմների կատարելագործմանը միտված մի շարք հարցեր: Մասնավորապես՝ քննարկվել և գրախոսվել են 1 ձեռնարկ և 1 ուղեցույց: Քննարկվել են նաև գնահատման բազմաբաղադրիչ համակարգին առնչվող հարցեր, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գրագողության դեմ պայքարին վերաբերող հարցեր: Ընդհանուր առմամբ՝ 2024–2025 ուսումնական տարում մեթոդխորհրդի գործունեությունը ուղղված է եղել ուսուցման գործընթացի շարունակական բարելավմանը և ուսումնական նյութերի ու մեթոդների արդիականացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ֆակուլտետի մեթոդխորհրդի կատարած աշխատանքների վերաբերյալ Ն. Հարությունյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Սյուզաննա Կարապետի Նավասարդյանի՝ «Մաքս Ֆրիշի գեղարվեստական աշխարհը» մենագրության տպագրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Անուշ Սեդրակյանը նշեց, որ մենագրությունը բազմաբովանդակ ուսումնասիրություն է, որը վերլուծում է Մաքս Ֆրիշի արձակ ստեղծագործությունը, ինչը ներթափանցված է էքզիստենցիալ փիլիսոփայությամբ՝ կենտրոնանալով ինքնության, ազատ ընտրության, հիշողության և սոցիալական խնդիրների վրա։ Դոցենտ Ս. Նավասարդյանը լուսաբանում է Ֆրիշի վեպերը՝ ներկայացնելով մարդու ներքին ճգնաժամը, բացահայտելով ինքնության որոնման բարդ ու հակասական ճանապարհը։ Ներկայացված աշխատանքը հետաքրքիր է, արդիական և օգտակար կլինի ինչպես կրթագիտական ոլորտի մասնագետների, այնպես էլ սովորողների համար։

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Սյուզաննա Կարապետի Նավասարդյանի՝ «Մաքս Ֆրիշի գեղարվեստական աշխարհը» մենագրությունը տպագրության։ Որոշումն ընդունվեց միաձայն։

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

22.05.2025 թ.